ՆԱԽԱԳԻԾ

Կ-217[1]-28.03.2022-ՏՀ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետից «վերահսկող լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության պետական սահմանով» բառերը փոխարինել «վերահսկող լիազոր մարմնի կողմից, իսկ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում մաքսային մարմինների կողմից» բառերով.

2) լրացնել նոր 3.1-~~րդ~~ ~~ին~~ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«3.1) **սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում՝ պետական սահմանի անցման կետերում՝** սույն օրենքով նախատեսված սահմանային պետական վերահսկողության գործառույթներ, որոնք իրականացվում են բացառապես փաստաթղթային ուսումնասիրության, փաստաթղթային ստուգման, ակնադիտական զննման կամ ակնադիտական հետազոտման (բեռների նույնականացման) ~~բեռների նույնականացման~~ միջոցով: Սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում իրականացնում են մաքսային մարմինները.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Լիազոր մարմնի» բառերից հետո լրացնել «և պետական սահմանի անցման կետերում սահմանային պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի» բառերը.

~~1~~2) լրացնել նոր 5.1-~~րդ~~ ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5.1. Պետական սահմանի անցման կետերում սույն հոդվածով նախատեսված պետական վերահսկողության գործառույթները իրականացնում են մաքսային մարմինները՝ որպես սահմանային պետական վերահսկողություն պետական սահմանի անցման կետերում:».

~~2~~3) ուժը կորցրած ճանաչել 6-9-րդ մասերը:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «տարածքային ստորաբաժանումների (սահմանային հսկիչ կետերի եւ մարզային կենտրոնների)» բառերը փոխարինել «տարածքային ստորաբաժանումների» բառով.

2) լրացնել նոր 1.1-~~րդ~~ ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Պետական սահմանի անցման կետերում սույն հոդվածով նախատեսված պետական վերահսկողության գործառույթները իրականացնում են մաքսային մարմինները՝ որպես սահմանային պետական վերահսկողություն պետական սահմանի անցման կետերում:».

3) 3-րդ մասում «Հսկիչ կետում» բառերը հանել:»:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասում «լիազոր մարմնին» բառերից հետո լրացնել «կամ մաքսային մարմնին» բառերը:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ ծմբագրությամբ

«1.Մաքսային մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանությունը պարզելու նպատակով պետական սահմանի անցման կետում զննում է ներմուծվող սննդամթերքը եւ կենդանական ծագման մթերքը եւ

որոշում ուղեկցող փաստաթղթերին համապատասխանությունը: Զննման ընթացքում ուսումնասիրվում են միայն փաստաթղթեր:».

2) 5-րդ մասում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «մաքսային մարմնի» բառերով.

3) 6-րդ մասում «բյուջե» բառից հետո լրացնել «նախքան» բառը, իսկ «ավարտից հետո՝ երեք բանկային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «ավարտը» բառով:

Հոդված 6. Օրենքի 17-րդ հոդվածում լրացնել նոր 5-րդ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5.Պետական սահմանի անցման կետերում սույն հոդվածով նախատեսված պետական վերահսկողության գործառույթները իրականացնում են մաքսային մարմինները՝ որպես սահմանային պետական վերահսկողություն պետական սահմանի անցման կետերում:»:

Հոդված 7. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 2.1-~~րդ~~ ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Պետական սահմանի անցման կետերում սույն հոդվածով նախատեսված պետական վերահսկողության գործառույթները իրականացնում են մաքսային մարմինները՝ որպես սահմանային պետական վերահսկողություն պետական սահմանի անցման կետերում:».

2) 4-րդ մասում «տարածքային մարմնի ղեկավարները» բառերից հետո լրացնել «,իսկ սույն հոդվածի 2.1-~~րդ~~ ին կետով նախատեսված դեպքում նաեւ մաքսային մարմնի ղեկավարը, նրա համապատասխան տեղակալը, մաքսային հսկողության համապատասխան ստորաբաժանման ղեկավարը:»:

Հոդված 8. Օրենքի 21-րդ հոդվածի

1) 1-ին մասում~~ի~~՝

ա. ~~1-ին պարբերությունում~~ «պաշտոնատար անձինք» բառերից հետո լրացնել «, իսկ պետական սահմանի անցման կետերում սույն օրենքով նախատեսված սահմանային պետական վերահսկողություն իրականացնող մաքսային մարմիններ~~ը,~~ն» բառերը.

բ. 2-րդ կետում ~~«կնիքով» բառից հետո լրացնել~~ «լիազոր մարմնի կնիքով» բառերը փոխարինել~~«կամ էլեկտրոնային եղանակով» բառերը~~«լիազոր մարմնի կամ մաքսային մարմնի կնիքով կամ էլեկտրոնային եղանակով» բառերով.

2) 2-րդ մասում՝

ա. «պաշտոնատար անձինք» բառերից հետո լրացնել «, իսկ պետական սահմանի անցման կետերում սույն օրենքով նախատեսված սահմանային պետական վերահսկողություն իրականացնող մաքսային մարմինները» բառերը.

բ. ~~2-րդ մասի~~ 10-րդ կետում «անձնական կնիք» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային եղանակով հավաստման հնարավորություն» բառերը:

3) 3-րդ մասում «Լիազոր մարմնի» բառերը փոխարինել «Պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի» բառերով, իսկ «լիազոր մարմինը» բառերը՝ «պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմինը» բառերով:

Հոդված 9. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 1-4-րդ հավելվածները:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
2. Պետական սահմանի անցման կետերում մինչև «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 12.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարգի սահմանումը իր իրավասության սահմաններում վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը: